ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» նոյեմբերի 2013թ. N 395

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 1212-ն որոշման պահանջներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ձմեռային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու, ինչպես նաև զորակոչի անցկացման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել տարածքային (Արմավիր, Էջմիածին) հանձնաժողովներ՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքային զինկոմիսարիատներին (Գ.Կարապետյան, Հ.Ազատյան)՝ ըստ զինկոմիսարյատների կողմից սպասարկվող տարածքների՝
   1) 2013 թվականի ձմեռային զորակոչն անցկացնել Հայաստանի Հանարապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 7-ի N 1212-ն որոշմամբ սահմանված կարգով (2013 թվականի դեկտեմբեր 2014 թվականի հունվար ամիսների ընթացքում):
   2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափող քաղաքացիների վերաբերյալ նյութերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դատախազություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների, կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին առաջարկել՝
   1) տվյալ տարածքը սպասարկող զինկոմիսարիատի պահանջով զորակոչիկներին ծանուցել զինկոմիսարիատ կանչելու մասին և աջակցել նրանց ներկայանալուն.
   2) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել բոլոր կազմակերպություններում նշված անձանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների անշեղ կիրառումը և այդ անձանց գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը (պետ՝ Ծ.Գրիգորյան) զորակոչային հանձնաժողովը համալրել համապատասխան բժիշկ մասնագետներով:
5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը (պետ՝ Գ.Ավետիսյան)՝
   1) ապահովել հասարակական կարգի պահպանումը մարզի զորակոչային տեղամասերում և զորակոչիկների անվտանգ տեղափոխումը.
   2) ապահովել մարզի տարածքում և տարածքից դուրս զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումն ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամասեր:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը (պետ՝ Ա.Ղուկասյան)՝ապահովել մարզի տարածքային զինկոմիսարիատներից պարբերական տեղեկատվություններ՝ զորակոչի ընթացքի վերաբերյալ:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը (պետ՝ Դանիելյան)՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինկոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինկոմիսարիատների հայտերի:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Հ.Վարդանյան)՝ ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը՝ հատուկ ուշադրության դարձնելով 2013 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպմանն ու անցկացմանը:
9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային զորակոչային հանձնաժողովին և տարածքային զինկոմիսարիատներին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ**